

# ԻՄ ՍԵՐԸ

(Պետեօֆիից)

Սիրում եմ անպէս, որպէս չէ սիրած  
Դեռ ոչ սի էակ արար—աշխարհում.  
Այդ սէրն է միայն, որ սըրտիս տիրած՝  
Անշէջ վառում է իմ ջերմ երգերում:

Բայց ես իմ սիրով չեմ երգում ներքող  
Երկրային պարզէ՛ սին գեղեցկութեան.  
Պաշտում եմ մի սուրբ պատկեր լուսաշող—  
Նա է իմ կուռքը երկրպագութեան:

Ո՛հ, դու ես իմ սէրն, սուրբ ազատութիւն,  
Ես քեզ եմ միայն սիրում խելագար.  
Քեզ եմ նուիրում իմ խանդ, իմ աւիւն,  
Իմ կեանք, իմ արև զոհում քեզ համար:

Ո՛վ ազատութիւն, անմարմին ոգի,  
Թովի՛չ երազում ինձ երևեցար.  
Եւ իմ վառ սըրտի, իմ վառ ցընորքի  
Դու միակ իշխող տիրուհին դարձար:

Ես զմայլում էի քո լոյս-պատկերով,  
Քո հետ համբուրւում ազատ, անվտանգ.  
Բայց յանկարծ դահիճն արնաներկ սըրով  
Խզեց իմ սիրոյ մաքուր թոթովանք...

Ես քեզ կամեցայ, ո՛վ լոյս-հըրեշտակ,  
Պարզեւի սիրոյս վարդը նորաբաց.  
Այժմ առ դիակս, վարդի փոխանակ,  
Արնաներկ դիակ՝ քո սիրոյն զոհուած...